Ես եմ հովիւն քաջ եւ ճանաչեմ զիման եւ ճանաչիմ յիմոցն

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը զինվորների շրջապատում

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դիրքորոշումը եղել, կա եւ լինելու է խաղաղասիրությունը: Սակայն Հայոց Եկեղեցին, մշտապես հավատարիմ իր որդեգրած քրիստոնեական եւ համամարդկային բարոյական արժեքներին, հիմնադրումից ի վեր կանգնած է եղել նաեւ վասն հայրենյացի եւ ազգի գոյապայքարի ակունքներում՝ հարկ եղած դեպքում խաչի հետ մեկտեղ սուր բարձրացնելով: Պետականության կորստից հետո Հայոց Եկեղեցին դարեր շարունակ եղել է նաեւ հայ ժողովրդի ազգային ամենամեծ ու բազմագործառույթ կառույցը՝ իր վրա վերցնելով ոչ միայն ազգի գոյապահպանման խնդիրները, այլեւ հոգեւոր ու մշակութային, գիտական ու կրթական զարգացման, ասել է թե՝ մեր ինքնության հիմնարար կռվանները: Հենց սա էր նրա ազգային նկարագիր ձեռք բերելու բացառիկ իրողությունը: Հայոց Եկեղեցին հանուն հայրենիքի եւ հավատքի մղված պայքարին մասնակից եղավ դեռեւս 4-րդ դարի սկզբներին: Հայ ժողովրդի եւ Հայ Եկեղեցու ազատատենչությունն ու ազատ ոգու կամքը լավագույնս դրսեւորվեցին դրանից մեկ դար անց Ավարայրի դաշտում:

Ավարայրից հետո հայ ազատագրական պայքարը գործնականից անցում կատարեց դեպի գաղափարական-տեսական դաշտ՝ իր բյուրեղացած արտահայտությունն ստանալով հատկապես 5-րդ դարի հայ մշակույթի մեջ, որի ստեղծողները Հայ

Տ. Մովսես վրդ. Սարգսյան, Տ. Պարգեւ արք. Մարտիրոսյան եւ Տ. Վարազդատ քհն. Նաջարյան

Եկեղեցու ծոցում մեծացած եւ քրիստոնեական հավատքով ու գաղափարներով լցված հոգեւորականներ էին:

Այսօր զինվորի, առավել եւս՝ քրիստոնյա զինվորի համար անհրաժեշտություն է իմանալ, թե ինչի եւ ում համար է կռվում, արդյո՞ք իր պայքարն արդարացի է: Հայրենիքի եւ հայրական օջախի պաշտպանության համար մղվող պատերազմը սուրբ է, սիրո ամենաբարձր դրսեւորում, որի մասին վկայեց Ինքը՝ Հիսուս Քրիստոս. «Չկա ավելի մեծ սեր, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար» (Հովհ. 15.13):

Ցավոք, թշնամու հետ հարաբերություններում սուրբգրային մի շարք վկայություններ, օրինակ՝ Մատթ. Ե 43–45, տեղիք են տվել այլակարծությունների եւ թյուրըմբռնումների, որոնք պարզապես սխալ եւ կամայական, իսկ երբեմն էլ միտումնավոր թյուր ու խեղված մեկնաբանությունների կամ սուբյեկտիվ վերաբերմունքի արդյունք են: Ուստի անհրաժեշտ է լուսաբանել Հայ Եկեղեցու դիրքորոշումը, որը թեեւ պատերազմների, արյունահեղությունների նկատմամբ մշտապես եղել է եւ է խիստ ու մերժողական. «...զի ամենեքեան՝ որ սո՛ւր առնուցուն՝ սրո՛վ անկցին» (Մատթ. ԻՁ 52), սակայն դա ամենեւին չի նշանակում, թե Հայ Եկեղեցին դեմ է հավատքի, սրբության եւ սրբավայրի, մերձավորի կյանքի պաշտպանության, արդարության եւ ազատության վերականգնման համար մղվող մարտերին. «Մի՛ համարիք՝ եթէ եկի արկանել խաղաղութիւն յերկիր. Ո՛չ եկի արկանել խաղաղութիւն, այլ սուր» (Մատթ. Ժ 34): Աներկբա է, որ Հայոց քաջարի բանակը պետք է պաշտպանի իր երկիրը, հավատը, իր պետականությունը եւ ժողովրդին՝ ընդսմին պատժելով չարը. «...եթէ չար գործես, վախեցի՛ր. քանի որ սուրը մէջքին ի զուր չէ կապուած (Հռոմ. ԺԳ 4):

Հատկանշական է, որ ազգային ազատագրական պայքարում (թե՛ միջնադարում, թե՛ այսօր) Հայ Եկեղեցին առաջնորդվել է ոչ միայն բացառապես քրիստոնեական, այլեւ համամարդկային բարոյականության չափանիշներով: Բնականաբար, վիճարկման ենթակա չէ հայ ազատագրական պայքարում Հայ Եկեղեցու ներգրավվածության արդարացի լինելու հանգամանքը, որը կարող է հակառակորդի կողմից նաեւ շահարկվել: Սակայն սթափ գիտակցությամբ առաջնորդվողները գիտեն, որ սա ազգամիջյան պատերազմ է, եւ հայը պայքարում է թուրք եւ ադրբեջանցի ցեղասպանների դեմ հանուն իր գոյության, հանուն արդարության եւ ճշմարտության հաղթանակի: Մենք պայքարում ենք մեր պատմական հայրենիքի մի հատվածի՝ Արցախ աշխարհի համար, աշխարհ, որտեղ առ այսօր մշտապես ապրել է հայը, որտեղ հայի հազարամյակների կնիքը կա, նրա անբեկանելի նյութական ու հոգեւոր արժեքներն ու հիշատակները: Ուստի, պայքարում ենք ազատ ու անկախ ապրելու՝ բնական եւ բնատուր մեր իրավունքի համար:

Նշենք, որ դեռեւս 1988—1994 թթ. արցախյան հերոսամարտի ժամանակ եղել են շահարկումներ, որոնց նպատակը պատերազմին կրոնական երանգ հաղորդելն է եղել: Բարեբախտաբար, այդ օրերին կրոնական առաջնորդները, լավ ըմբռնելով նման մտայնության երկուստեք աղետաբեր ու կործանարար լինելը, ձեռնարկել են կանխագելիչ քայլեր: Մասնավորապես հիշատակելի են 1988 թ. Անդրկովկասի եւ

Տ. Մկրտիչ աբդ. Կարապետյան

Հյուսիսային Կովկասի կրոնական առաջնորդների համատեղ ուղերձը՝ ուղղված իրենց հավատացյալներին, եւ 1993 թ. Վազգեն Ա կաթողիկոսի եւ Շեյխ Ուլ Իսլամ Ալլահշյուքյուր Փաշազադեի համատեղ հայտարարությունն առ այն, որ այդ պատերազմը չի կրում կրոնական բնույթ:

Տ. Վրթանես եպս Աբրահամյան

Մեր Տեր Հիսուս Քրիստոս ասում է. «Ես եմ հովիւն քաջ» (Յովհ. Ժ 11): Իսկ Հայ Եկեղեցին ոչ այլ ինչ է, եթե ոչ Քրիստոսի ներկայությունը Հայոց աշխարհում, հայոց մեջ Նրա գործի շարունակողը, հետեւաբար, մեր Եկեղեցին չի կարող չհետեւել տերունական խոսքին՝ «հովիւ քաջ զանձն իւր դնէ՛ ի վերայ ոչխարաց» (Յովհ. Ժ 11), եւ հոգ չտանել իրեն վստահված բանավոր հոտի հոգեւոր ու մարմնավոր պաշտպանության մասին: Չէ որ հենց Քրիստոսի կյանքն ինքնին մի յուրօրինակ զոհաբերություն էր՝ հանուն մարդկության փրկության, չարից ազատագրության եւ արդարության հաստատման՝ «զանձն իմ դնեմ ի վերայ ոչխարաց» (Յովհ. Ժ 15): Ուրեմն Հայ Եկեղեցին, իր սպասավորներով հանդերձ, ամենայն իրավունքով կարող է հոգեխնամ առաքելություն իրականացնել իր զինվորների համար, լինել այն բանակի կողքին, որի պատերազմն արդար է եւ սուրբ:

Շարունակությունը՝ էջ Բ

Ես եմ հովիւն քաջ եւ ճանաչեմ

Տ. Արիստակես եւ Տ. Մեբեռս քահանաները անտառում Մկրտության խորհուրդը կատարելիս

Սկիզբը՝ էջ Ա

2020 թ. սեպտեմբերի 27-ին թուրք-ադրբեջանական դաշինքի սանձազերծած պատերազմն Արցախի Հանրապետության եւ արցախահայության դեմ Հայ Եկեղեցին եւ եկեղեցականը դիմավորեցին ինչպես 5-րդ դարում. «Եղբայրներ, չթուլանանք ու չվհատվենք, այլ պինդ սրտով եւ հաստատուն հավատով հոժարակամ հարձակվենք այն թշնամիների վրա, որ վեր են կացել գալիս են մեզ վրա: Մեր հույսը կրկնակի է երեւում մեզ. եթե մեռնենք, կապրենք, եւ եթե մեռցնենք, միեւնույն կյանքն է կանգնած մեր առաջ: ...Դուք բոլորդ գիտեք, որ առաջվա ժամանակները, երբ դուք պատերազմ էիք գնում, թեպետեւ սովորություն ունեիք քահանաներին միշտ բանակում պահել, բայց ճակատամարտի ժամանակ ձեզ հանձնելով նրանց աղոթքին, որեւէ ամուր տեղ էիք թողնում նրանց, իսկ այսօրվա եպիսկոպոսները, երեցները, սարկավագները, սաղմոսերգուներն ու գրակարդացները, ամեն մեկը սահմանված կանոնով իբրեւ սպառազինված եւ պատերազմի պատրաստված՝ կամենում են ձեզ հետ միասին հարձակվել եւ ջարդել ճշմարտության թշնամիներին» (Եղիշե):

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին

Տ. Վարազդատ քհն. Նաջարյան

Երկրորդի անմիջական նախաձեռնությամբ Հայ Եկեղեցին իր բոլոր հնարավորություններով՝ թե՛ Հայրենիքում եւ թե՛ Սփյուռքում, լծվեց իր սուրբ առաքելությանը: Վեհափառ Հայրապետը մի քանի անգամ հանդես է եկել կոչ-ուղերձներով, որոնք ոչ միայն ոգեշնչող ճառեր էին, այլեւ՝ հորդոր յուրաքանչյուրին՝ իր ուժերի ներածին չափով կարելին անելու հայրենիքի պաշտպանության ի նպաստ: Հայրապետիս կոչերին ու ուղերձներին հաջորդեցին գործնական քայլերը: Մայր Աթոռ Ս. Էջմիածինն առաջիններից մեկն էր, որ խոշոր դրամական օգնություն փոխանցեց Համահայկական հիմնադրամին: Վեհափառ Հայրապետի

Տ. Գեղարդ աբդ. Հովհաննիսյան

կոչին ընդառաջ՝ նույն ոգով թե՛ հայաստանյան եւ թե՛ սփյուռքյան թեմերում տեղի ունեցան դրամահավաքներ եւ մարդասիրական օգնության տարբեր միջոցառումներ: Նորին Սրբության նախագահությամբ Մայր Աթոռում տեղի ունեցան ԳՀԽ, եպիսկոպոսական եւ միաբանական բազմաթիվ ժողովներ, որտեղ քննարկվեցին Մայր Աթոռի կողմից լավագույնս օգտակար լինելու հնարավորությունները Արցախին եւ արցախահայությանը: Բացի այդ՝ Վեհափառ Հայրապետը տասնյակ գրություններ է ուղարկել միջազգային տարբեր կառույցներ, տարբեր երկրների եւ եկեղեցիների ղեկավարներին եւ առաջնորդներին՝ նկարագրելով Արցախի դեմ թուրքադրբեջանական վայրագությունները՝ հերթական անգամ ամենաբարձր ատյաններում բարձրաձայնելով Արցախի անկախության ճանաչման գործընթացը: Հայոց Հայրապետն այս օրերին մշտապես հանդիպումներ է ունենում ազգային, պետական, հասարակական-քաղաքական գործիչների հետ, քննարկում բոլոր անհրաժեշտ քայլերի, ձեռնարկների հաջորդականությունը՝ ի նպաստ Արցախի: Անշուշտ այսքանով չեն սահմանափակվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Վեհափառ Հայրապետի՝ արցախահայության արդար պայքարին օժանդակելու ուղղությամբ տարվող աշխատանքները. Մայր Աթոռի գրեթե բոլոր բաժիններն իրենց գործունեությունը փորձում են այս օրերին իրականացնել մեկ նշանաբանով՝ ամեն ինչ հանուն Արցախի եւ հանուն զինվորի: Այս շրջանակներում Մայր Աթոռի բազմաթիվ աշխատակիցներ իրենց նպաստն են բերում մարդասիրական տարբեր միջոցառումներին եւ նախաձեռնություններին՝ արյուն հանձնելուց մինչեւ պաշտպանիչ ցանցերի պատրաստում, դրամահավաքից մինչեւ ռազմաճակատ կամավորագրվելը, պաշտոնական էջերում ռազմահայրենասիրական նյութերի ստեղծում-տարածումից մինչեւ միջազգային հարթակներում արցախահայության խնդիրների բարձրաձայնում:

Բարձրորեն արժեւորելով վերոնշված տեսանելի եւ անտեսանելի միջոցառումներն ու ձեռնարկները, այնուհանդերձ, անուրանալի եւ իրապես անգնահատելի է այն հանձնառությունը, որը գործնականում իրականացնում է հայ հոգեւորականը անմիջապես ռազմաճակատում: Այս իրողությունը, եթե ձեւակերպելու լինենք հինգերորդդարյան մտածողությամբ, ապա կստացվի, որ շարունակվում է հայ հոգեւորականի պայքարը՝ «մահ իմացյալ՝ անմահություն է» գաղափարախոսությամբ, այսինքն՝ Ղեւոնդյանց ոգին, նույնիսկ հազարամյակների հեռավորությունից, անշեջ է, ոչ միայն անշեջ, այլեւ՝ բոցավառ: Եթե Սարդարապատում եւ արցախյան առաջին հերսամարտի ժամանակ Ղեւոնդյանց մտածողությամբ ռազմաճակատում հոգեւոր առաքելություն իրականացնող եկեղեցականաց դասը պատմագրության կողմից կոչվել է նոր Ղեւոնդյանք, ապա այսօր արցախյան այս պատերազմում, մարտի դաշտում ի մահ կանգնած մեր հոգեւորականները պետք է կոչվեն նորագույն Ղեւոնդյանք:

Պատահական չէ, որ նահատակ դարձած հայ եկեղեցականին ժողովուրդը տվեց «անմահության ճամփորդ» պատվանունը: Ցավոք, այդ անմահության ճամփորդների թիվը քիչ չէ: Իսկ Արցախի հայապատկան հողի ազատագրության համար մարտնչող հոգեւորականները, փառք Աստծո, շատ են՝ սկսած սփյուռքյան թեմերում ցույցեր եւ հանգանակություններ իրականացնող եկեղեցականներից մինչեւ հայաստանյան թեմերում գործողները՝ անկախ նրանից, թե սահմանին զինվորի կողքին կանգնած, զինվորին հույս ու հավատ, ոգի ներշնչող, վիրավորներին մարտի դաշտից դուրս բերող սարկավագն է ու դպիրը, քահանան ու աբեղան, թե անձամբ Արցախ մարդասիրական օգնություն տարած եւ ռմբակոծության տակ մնացած կամ հրետակոծության ներքո եկեղեցու խաչի օծման արարողություն իրականացնող եպիսկոպոսը, թե զինվորներին օրհնված խաչեր ու աղոթագրքեր ուղարկող քահանաները: Անշուշտ, բոլորն էլ՝ իրենց առաքելությանն ու կոչմանը հավատարիմ, իրականացնում են իրենց պարտավորությունը: Սակայն այստեղ առավելապես կցանկանայինք կրկին առանձնացնել նրանց, ովքեր լինելով անմիջապես ռազմաճակատում, վտանգելով իրենց կյանքը՝ ոգեշնչում ու քաջալերում են հայ զինվորին:

Այդ եկեղեցականներից շատերն ի պաշտոնե արդեն իսկ իրենց նպաստն էին բերում հայոց բանակում, նրանք բանակի հոգեւոր առաջնորդության գնդերեցներն են, ինչպես նաեւ այլուր ծառայող այն եկեղեցականները, որոնք պատերազմի լուրն առնելուն պես, Վեհափառ Հայրապետի օրհնությունն ստանալով, մեկնել են ռազմաճակատ:

Առաջին հերթին պետք է խոնարհվել այս պայքարում զոհված եւ անհետ կորած հոգեւորականների հիշատակի առջեւ: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբաններից **Տ. Մկրտիչ աբդ. Կարապետյանը**, որը Վեհափառ Հայրապետի օրհնությամբ կամավորագվելով բանակի հոգեւոր առաջնորդությանը, պատերազմական գործողությունների առաջին իսկ օրերից մեկնել է Արցախ՝ Հադրութ: Հայր սուրբը վիրավորում ստացած եկեղեցականին տեղափոխել

Տ. Մանուկ քհն. Չեյնալյան

Տ. Հովհաննես քհն. Հովհաննիսյան

Տ. Անդրեաս քհն. Թավադյան

Զիման եւ Ճանաչիմ յիմոցն

Հոգեւոր զրույց

Լուսահոգի Նարեկ սրկ. Պետրոսյան

է Երեւան եւ կրկին վերադարձել Հադրութ, ուր եւ ռազմական գործողություններից մեկի ժամանակ հանդիպել է դիվերսիոն հետախուզական խմբի, որից հետո, ցավ ի սիրտ, նրանից տեղեկություններ այլեւս չկան: Հայր Մկրտիչը մասնակցել է նաեւ

Տ. Գալուստ քհն. եւ Գագիկ սրկ. Հակոբյան

2016 թ. ապրիլյան պատերազմին: Իսկ բանակի հոգեւոր առաջնորդության գնդերեց բարեշնորհ **Նարեկ սարկավագ Պետրոսյանը** ռազմական գործողությունների սկզբից մեկնել է Արցախ եւ գտնվել ռազմաճակատի տարբեր վայրերում: Իր հերթական առաքելությունը կատարելիս ստացել է մահացու վիրավորում: «Յիշատակն արդարոցն օրհնութեամբ եղիցի»:

Ռազմական գործողությունների ամենաթեժ վայրերում իրենց առաքելության մեջ առանձնանում են սարկավագաց դասի եկեղեցականները, նրանք, ովքեր Գեւորգյան հոգեւոր ճեմարանն ավարտելուց հետո իրենց ծառայությունը Եկեղեցուն բերում են բանակի հոգեւոր առաջնորդության ենթակայության ներքո՝ հոգեւոր ու հոգեբանական հույժ կարեւոր աշխատանք տանելով իրենց հասակակից զինվորների շրջանում:

Անշուշտ, այս օրերին սարկավագաց դասի համար ոգեշնչող եւ քաջօրինակ է քահանայից դասի, վարդապետների ու եպիսկոպոսների կեցվածքը: Առանձնապես հիշատակության է արժանի Արցախի թեմի առաջնորդ **Տ. Պարգեւ արք. Մարտիրոսյանի** եւ բանակի հոգեւոր առաջնորդ **Տ. Վրթանես եպս Աբրահամյանի** դերը: Սրբազան հայրերը մեկ անգամ չէ, որ փաստել են սուրբ Ղեւոնդյանց ոգու արժանի կրող լինելը: Նրանց անձնուրաց գործունեությունն այս գոյապայքարում անգնահատելի է. այդ մասին դեռ շատ պետք է գրվի: Նրանք ոչ միայն համակարգում են Արցախում գտնվող եկեղեցականաց գործունեությունը, այլեւ շատ հաճախ մեկնում են ամենավտանգավոր վայրերը՝ ոգեւորելու թե՛ տեղի եկեղեցականներին եւ թե՛ Պաշտպանության բանակի զինվորականներին: Արցախում՝ զինվորի կողքին, իր հոգեւոր առաքելությունն իրականացնելիս աչքի է ընկնում առաջին իսկ օրերից ռազմաճակատ մեկնած Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան **Տ. Մովսես վարդապետ Սարգսյանը** (նա Կալկաթայի մարդասիրական ճեմարանի տեսուչ-կառավարիչն է), որը հատուկ ռազմաճակատում լինելու նպատակով Վեհափառ Հայրապետի օրհնությամբ վերադարձել է Հայաստան եւ անմիջապես նույն գիշերն իսկ մեկնել Արցախ, հայր Մովսեսը գնդերեց հոգեւոր եղբայրների հետ միասին առաջինն էր, որ տերունապատվեր կոչմանը հավատարիմ, հենց ռազմաճակատում գնդերեց Տ. Վարազդատ քահանա Նաջարյանի հետ կազմակերպեց մկրտության արարողություն: Առաջնագծի հոգեւորականներից աչքի է ընկել **Տ. Գեղարդ աբեղա Հովհաննիսյանը**: Նշենք, որ ինչպես ապրիլյան քառօրյա պատերազմում, այնպես էլ այս օրերին հայր Գեղարդը առաջնագծում էր, թեեւ վիրավորում է ստացել, բայց փառք Տիրոջը, արդեն ամեն ինչ լավ է, եւ շուտով կվերադառնա ռազմաճակատ:

Դժվար է հիմա անուն առ անուն հիշել բոլորին, սակայն ինչպես չհիշել Շուշիի Ղազանչեցոց Սբ Ամենափրկիչ եկեղեցու հոգեւոր հովիվ **Տ. Անդրեաս քահանա Թավադյանին** եւ Դադիվանքի վանահայր եւ Արցախի թեմի Քարվաճառի շրջանի հոգեւոր հովիվ **Տ. Հովհաննես քահանա Հովհաննիսյանին**: Վերջիններս ինչպես արցախյան առաջին հերոսամարտում, այժմ եւս նույնիսկ հրետակծության եւ ռազմական գործողությունների ընթացքում ինքնամոռաց շարունակում են իրականացնել իրենց հոգեւոր առաքելությունը՝ այն համարելով իրենց պարտքն ու պարտականությունը:

Տ. Գեւորգ Տեր-Բարսեղյան, Մանվել, Դրաչ եւ Ծերուն սարկավագներ

Պետրոս սրկ. Ղազարյան

Ինչպես նշեցինք, առանձնակի կարեւորությամբ պետք է ընդգծել բանակի հոգեւոր առաջնորդության ունեցած մեծ դերն ու նշանակությունն այս պատերազմում:

Տ. Վարազդատ քհն. Նաջարյանը պատերազմի սկզբից զինվորի եւ հրամանատարի կողքին լինելու համար Երեւանից, որտեղ գտնվելիս է եղել ծառայության մեջ, կամավոր մեկնել է Արցախ՝ մատուցելով գնդերեցին վայել, հիացմունքի արժանի տարատեսակ ծառայություններ: Եղել է ճակատային տարբեր հատվածներում, կատարելով վտանգավոր իրավիճակներում իր առաքելությունը:

Իրենց քաջագործություններով եւ սխրագործություններով հետ չեն մնում մեր գնդերեց սարկավագները, որոնք պատերազմական գործողությունների հենց սկզբից եղել են իրենց զորքերի տեղակայման վայրերում՝ խոսքով, գործով ոգեշնչել ու գոտեպնդել մարտիկներին:

Շարունակությունը՝ էջ Դ

Ես եմ հովիւն քաջ եւ ճանաչեմ զիման եւ ճանաչիմ յիմոցն



Տ. Մկրտիչ քահանա

Սկիզբը՝ էջ Ա–Գ

Նրանցից է գնդերեց **Հրայր սարկավագ Լալայանը**, որը մարտական գործողությունների ընթացքում ընկճված զինվորներին կարողացել է ոգեշնչել եւ մղել մարտի՝ նրանց հետ անձամբ մեկնելով առաջնագիծ: Սակայն հրետակոծության ընթացքում վիրավոր սպային փրկելիս ինքն էլ է վիրավորում ստացել եւ բուժում ստանալուց հետո վերադարձել Արցախ եւ շարունակում է իր առաքելությունը՝ մշտապես գտնվելով ամենադժվարին կետերում՝ մատուցելով հոգեւորականին վայել հիացմունքի արժանի անօրինակ ծառայություններ: Ցավոք, նա եւս վիրավորում է ստացել Հադրութում եւ ապա վերականգնվելուն պես կազմել է ջոկատ՝ «Հրեղեն գունդ» անվանմամբ, եւ իր ջոկատով պահպանել դիրքեր: Արցախում լինելու մեծ ցանկությունը նաեւ ռազմաճակատ էր տարել Արագածոտնի թեմի Ամբերդի հովվությունում իր ծառայությունը բերած **Խաչիկ դպիր Վարդանյանին**: Նա ռազմական գործողությունների սկզբից Վրթանես եպս Աբրահամյանի օրհնությամբ կամավորագրվել է բանակի հոգեւոր առաջնորդությանը, ցավոք ստացել է ծանր վիրավուրում եւ այժմ գտնվում է ապաքինման փուլում:

Հադրութում նաեւ աչքի է ընկել գնդերեց **Կարո սարկավագ Ղարիբյանը**, որը մարտերի սկսվելու առաջին իսկ օրերից եղել է զորքի կողքին: Գնահատելի է նաեւ ավագ գնդերեց **Գոռ սարկավագ Գյուրջյանի** ծառայությունը: Վերջինս մարտերի սկզբից իր ծառայությունն է մատուցում ռազմաճակատի տարբեր կետերում՝ սեփական միջոցներով ու փոխարդամիջոցներով կազմակերպելով դժվարին եւ անձնուրաց ծառայություն, իր փորձով օգնելով մնացյալ գնդերեցներին՝ ճիշտ կողնորոշվելու բարդ իրավիճակներում: **Մկրտիչ սարկավագ Տեր-Մկրտչյանը** եւս պատերազմի ողջ ընթացքում գտնվել է ծառայության մեջ՝ մատուցելով գնդերեցին վայել հիացմունքի արժանի ծառայություններ, իսկ գնդերեց **Հովհաննես սարկավագ Անդրյանը** մարտերի առաջին օրվանից եղել է Մարտակերտում՝ մշտապես դրսեւորելով հայ հոգեւորականին վայել կեցվածք: Իրենց արժանավայել ծառայությամբ աչքի են ընկել նաեւ ավագ գնդերեց **Տ. Գալուստ քհն. Սահակյանը** եւ գնդերեց **Տ. Մանուկ քհն. Զեյնալյանը,** ինչպես նաեւ գնդերեցներ **Արտաշես սրկ. Ներսիսյանը, Մանավազդ սրկ. Մկրտչյանը, Ծերուն սրկ. Ներսիսյանը, Պետրոս սրկ. Ղազարյանը**, **Գագիկ սրկ. Հակոբյանը, Գագիկ սրկ. Մարտիրոսյանը, Դավիթ սրկ. Հայրապետյանը, Մանվել սրկ. Սարգսյանը,** ԳՀԵ քահանայից պատրաստման լսարանի սան **Էդգար սրկ. Օհանյանը** եւ այլք:

Այստեղ անհրաժեշտ է անդրադառնալ նաեւ մի կարեւոր հանգամանքի եւս. Հայոց Հայրապետի անմիջական նախաձեռնությամբ՝ թե՛ Մայր Աթոռի միաբանների, թե՛ Հայաստանի ու Սփյուռքի թեմերի հոգեւորականների խմբերը մեկնում են ռազմաճակատ՝ տեղում իրենց գործնական ու խորհրդատվական օգնությունը բերում Արցախի թեմի հոգեւորականներին ու բանակի գնդերեցներին: Այսօր ինչպես ողջ հայ ժողովուրդը, այնպես էլ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին դարձել է մի բռունցք, մի կուռ շարասյուն՝ վասն հայրենյաց ու իր հոտի:

Անշուշտ հնարավոր չէ բոլորի եւ ամեն ինչի մասին խոսել: Դեռեւս շատ իրողություններ սպասում են իրենց փաստագրման հերթին: Իհարկե Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, նվիրապետական մյուս աթոռների եւ թեմերի գործունեության ամբողջական պատկերը հնարավոր չէ միանգամից եւ մեկ շնչով ներկայացնել, հնարավոր չէ անուն առ անուն հիշատակել բոլոր այն եկեղեցականներին, որոնք անուրանալի ներդրում ունեն այս պատերազմում, սակայն առանձնակի չկարեւորել բանակի հոգեւոր առաջնորդության գնդերեցների բերած նպաստը, անհնարին է, քանզի առանց նրանց ինքնամոռաց նվիրումի եւ ի մահ կանգնյալ հայրենասիրական ոգու հնարավոր չէ հասնել բաղձալի հաղթական օրվան: Եվ ինչպես ասում է մեծն բանաստեղծը.

— ՈՂԲԱՄ ՄԵՌԵԼՈ՞Ց...
— ԲԵԿԱՆԵՄ ՇԱՆԹԵՐ...
— ԿՈՉԵՄ ԱՊՐՈՂԱ՞Ց...

Տ. Արարատ քահանա ՊՈՂՈՍՅԱՆ

Մկրտիչ սրկ. Տեր-Մկրտչյան

Գոռ սրկ. Գյուրջյան

Մանավազդ սրկ. Մկրտչյան

Հովհաննես սրկ. Անդրյան

Էդգար սրկ. Օհանյան

Կարո սրկ.Ղարիբյան

Արտաշես սարկավագ

Վահե սարկավագ

Գագիկ սրկ. Մարտիրոսյան

Հրայր սրկ. Լալայան